

Հիմնական հարցեր



ԱՐԾՈՒՒ

ՎԱՄՊՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՄՆԵԼ ԷԱՅՐԵՆԱԽԻՐ ԹԵՒՕՐ
ՅԱՐԺՈՒՆԻ ՄԵՆԱՍԱՆԷՆ ՎԱՐԱԳԷՅ

ԽՄԲԱԳԻՐ ԷԱՅՐԵՆԱԽԻՐ
ՄԿԸՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐ

ՕԴՈՍՏՈՍ 1858 . ԹԻՒ 8 .

ՂԱՆՏՈՄՊ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՄՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՄԵՆ

Ի ՂԱՐԱԳ

պեայ շարեմքեզ աստանօր հակիրճարան յիշատակութեամբ եւ եթ, յայլում նուագի թողում զառ ինոյունց երեւելեաց գործս հանդիսացուցանել ուրոյն ուրոյն ճառագրութեամբ :

ՅՈՎԱԿԻՓ, որ ի վայոց ձորոյ անդրանիկ աշակերտ, զկնի սրբոյն Սահակայ արժանընտիր կաթօղիկոս Հայոց, Արտաշատու մեծի ժողովոյն նախագահ, նահատակեալ ընդ սուրբ Ղեւոնդեանն. զԱւետարանին զլուծ կրօղ պարանոց յառաջագէմքան զընկերան իսուրն Յազկերտին՝ տուեալ :

ՅՈՎԱԿԻՓ, որ ի Պաղանական տանէ, գործակից սրբոյն Մեսրովպայ. ընդ նմին ի թարգմանութեան պարսպեալ ի Սամուստ քաղաքին, յեղեակայ եւ ի Բիւզանդիոն ընդ այլ աշակերտակիցս յօժարաբար ընթացող :

ՅՈՎԶԼՆՆ, որ յեկեղեաց գաւառէ, անբաժան ընկեր Յովսեփայ Պաղնեցւոյն, յամենայնի վաստակակից մեծին Մեսրովպայ ի թարգմանութիւնս սրբաղան տառից :

ՂԵՒՈՆԴ Էրեց, ընտրելադոյն բողբոջ վանանդայ գաւառին, արեւանման ի պարս աստեղտփայլ աշակերտաց պայծառ ճառագայթեալ. նոր Եղնազար Բահանայ հայկազն, քաջ հանգիսադիր վարդանայ գնդին, ի հայրենեաց մինչեւ ցՆիւշապուհ քաղաք շղթայակապ վտարանդեալ, զարձուցիչ մօրկենադէն մողպետին Պարսից. ի վերայ հայրենի եկեղեցւոյն արեամբ չափ նահատակեալ :

ԵԶՆԻԿ Կողբնացի, քաջահմուտ Յոյն եւ Ատրի լեզուաց. երբեւ եղն խեթկիչ աղանդամիտ կարծեացն հզօրացոյն եղջերո իմաստութեան հսկողադէտ հովիւ Բաղրեւանդայ գաւառին :

ԿՈՐԻԻՆ, այր սքանչելի ձայնեալ առ իմաստութեան՝ եւ հանճարոյն. սիրող սրբոյն Մեսրովպայ, նորին հրաշակենցաղ վարուց քաջ նկարագիր :

ԵՂԵԷ, ոգի հեզահամբոյր, ատենադպիր տան մեծին վարդանայ Մամիկոնէի, Սաւարայրի Շաւարշական զաշաին աղաւանման միւշող ի վերայ վարդագոյն արեան ճապաղեաց, արտասուալից ճառագիր զհայրենավրէժ առաքինեացն.

Ջուրց իմաստութեան յորովայնէ նոցին բղխեալ, դեռօրէն դէ
նոցիւք զուարթացուցեալ ուրախացուցին զթառամեալ զը
րախան Հայաստանեայց :

Այսօրիկ են ահա ոսկեղինիկ դարուն Հոյակապ հնդկնակք
սքանչելի Մատենադիրք , հրահանգիչք մանկանց եկեղեցւոյ
երկիւղիւն Աստուածաշնորհութեան . դայեակք եւ դաստա
րակք աղպայցելոցն 'ի միտս կաթամբ իմաստութեան :

Այլ դու լռեաց անսանօր Աթոռիդ Վասպուրական , չե
դու բաւական զառաքինութեանց հանդէս այսպիսում Հայոց
քստ արժան նուագել . թող սկիզբն արմատէ գրիչ ոսկեղինիկ
դարուն յորդազեղուն բանիւք դովել , գրուատել , հռչակել
մեծացուցանել զգործս հոգեհանձար Հայոց :

Նշեա ուրեմն , քնարդ հայկախօսիկ , թէ հրապիսեօք ըն
թացան 'ի յԱթէն , որպիսի՞ յուսով դարձան 'ի հայրենին ,
եւ իբր ողբս առեալ լացին անմխիթար զապերջանիկ բախտ
Հայոց աշխարհին :

Եւ այսպէս մերքս ամենեքեան դումարէին հանդերձին
կազմէին , պատրաստէին , յուղի անկանէին , երկայնաձիգ ծա
նապարհորդէին , 'ի ծովս ընթանային , 'ի թեւս թեթեւս թռչե
ին , յերթալարս փայտակերտս ելանէին , զերստանակս լայնալանջ
ըմբռնէին , զխորաշանս օդատարածս յածէին , 'ի սասանտ
դաշտս անհաստատս արշաւէին , զմահ քան զկեանս միշտ ընտ
րէին , աներեւոյթ նպատակի ուշ ունէին , զորոց զկէր բազումք
յիւրօրբանջիւր դարս եւ ժամանակս հանգիստանային , նախան
ձաւոր դործոց բարեաց լինելով . 'ի վաստակս եւ 'ի ջանս պատ
րաստելով զանձինս , ժբանային , տքնէին , աշխատէին , հայցա
սէր լինէին ուսանելով , կրթելով վարժելով վաստակելով , պատ
րաստելով զանձինս ի յերկս օդտակարս , եւ 'ի գործս շահա
ւէտս , ոմանք զտառից գծադրութիւնս շահաւորեալ , ոմանք
գիւմաստ հաւաքեալ , զուսումնականն , զհամարողականն , զբա
ժրտականն , զատեղաբաշխականն , զքերականն , եւ զքերթո
ղականն . զգործնականն եւ տեսական իմաստասիրութիւն եւ ըն
մասունս նոցա որք են թուով երկոտասան : Ոմանց հաւասարէին

գիտութեամբ, քան զոմանս վեհագոյնք երեւելին, ոմանց զարմանալիք թուելին, ոմանց բաղձալիք լինելին, ժրութեամբ, ուշիմութեամբ, իմաստութեամբ, խոհեմութեամբ ուսումնասիրութեամբ, գիտութեամբ, բանագրականութեամբ: Ընդ ոմանս պատելին՝ բնութեամբ, զոմանս պատասխանելոյ արժանի ոչ համարելին, առ ընկերակիցս գովելիք, առ վարդապետս հաճելիք, հարցասէրք, բանասէրք, ընթերցասէրք, ուսումնասէրք տրնասէրք, ժրասէրք, երկասէրք. եւ այսպէս ջանային, արիանային, խիզախէին, զօրանային, հանդիսանային. պատրաստելով, կուտելով, ժողովելով, յօդելով, բարդելով բեռինս մեծամեծս եւ դժուարակիրս, զգրեանց բազմութիւնս եւ զուսումն իմաստութեան, բազմաց փափագելիս, բաղձալիս, հեշտալիս. . :

Եւ գային հասանելին մեծաւ ճոխութեամբ յաշխարհս Հայոց. վաճառականքն հոգեւորք, փարթամացուցիչք մանկանց Սիրիւի. . . սիրացուցիչքն բազմախումբ ժողովրդոց, զարդարիչք հռչակահանդէս տօնախմբութեան, ունելով ընդ ինքեանս բեռինս շահաւետս եւ արդիւնարարս. մարգարիտս գեղեցիկս եւ ախանս պատուականս, զբաղնոհականն, զատենականն, զկացրդականն եւ զաստուածաբանականն, զարդարելով զերկս աշխատողացն եւ զսոյնս իմաստասիրութեան պանծալիս արմատացուցանելով. եւ ծանօթ առնելով բազմաց զգիտութիւն, զերեւակայութիւն, զմիտս, զարհեստ եւ զմակացութիւն, եւ զայլն ամենայն զգովելիսն եւ զպանծնալիսն, եւ ըզպիտանիս պատուականաց, զգատեալսն եւ զմեկնեալսն յանպիտանեացն: Բանգի մեծաւ հոգաբարձութեամբ փոյթ յանձին կալեալ երանելեացն զշահաւետսն ժողովելով եւ ըզխոտանս ՚ի բաց ընկենելով:

Իսկ աւանդ յայսմ վայրի, զի բանս այլ ոչ ախորժէ յառաջիւ: Բանգի յորժամ հունձք բազում էին եւ մշակք սակաւ, եւ արտորայքն սպիտակացեալ եւ ՚ի հունձս հասեալ, եւ աղաճեցեալ եղեւ տէր հնձոցն եւ ելին մշակքն ՚ի հունձս, եւ արդ մանկաղք թեքեալք, եւ մշակք պատրաստք. եւ որք հնձին ոչ առաջի, վասն զի ծղօտ միայն՝ եւ սուղ ինչ նշմա-

րանք արտորայիցն երեւելին : Բանդի վաճառականքն մեր հոգեւորք յորժամ դարձան 'ի մեծայամ ուղղեւորութենէն , ոչ գտին զառաքելչան իւրեանց , զի վաղճանեալ էին սուրբքն , եւ բարձեալ թաղաւորութիւն , բայցայեալ վայելչութիւնն , եւ սպառեալ ուսումնասիրութիւնն , աղաւաղեալ կարգ աւերութիւն եւ բազմացեալ անկարգութիւնն , նսեմացեալ ճշմարտութիւն , եւ զօրացեալ ստութիւն : Ասանորց ողբս առեալ հառաչելին , հաչելին , արտասուս յաչաց կանթեցուցանելին , ձեռն 'ի ծնօտի հարեալ ողբային . երբեմն 'ի վերայ ծնդաց կապեալ տարակուսելին , զգլուխս շարժելին , զաչս ողորմ՝ յամեցուցանելին , զծնօտս ապտակելին , զբարձս ձեռնելին , ողբերդական բանս խօսելին , յեղանակաւ բացականչելին , զանշունչ տարեւս 'ի փութ շարժելին , եւ հա եւ հա բարբառելին , աւաղական բանս յաճախելին . 'ի զուր ժրացաք ասելին , ունայն վաստակեցաք : յանպէտս ջանացաք , ընդ վայր իմաստնացաք , յանշահս դեպքեցաք . աւանդ երկայնութեան ճանապարհին , մեծագոյն տքնութեան , յորով աշխատութեան , 'ի ծովու ալէկոծութեան , 'ի ցամաքի վաստակելոյն , մեծագին բեռանց կապելոյն : Աւաճառականքս պատրաստք եւ վաճառողք չեն 'ի միջի . պահեք մերձ եւ պսակադիրքս յօժարք , եւ որք պսակինն չիք առաջի . բանքս 'ի բերան եւ բանբերքս իմաստունք , եւ խնդրօք բանի ոչ երեւին :

Իրայեակքս մերձ՝ եւ ստինքս լցեալք , եւ ստեղծայր ոչ գտանին . վարդապետք հուպ՝ եւ ուսումն ազնիւ , եւ աշակերտեալք ոչ հանդիպին . Աստի էր . զի գերեցան , զի յրուսեցան , զի քայքայեցան , զի ամայացան , զի անտնտնեց չրկեցան . եւ երբեմն զայս կրեցին : Ասան չար գործոց , վասն բաղմունարց անօրէնութեան , վասն անիրաւ դատաստանաց , վասն կաշառ առութեան , վասն պողոնկութեան , վասն շնութեան , վասն գողութեան , վասն սպանութեան , վասն նախանձու եւ ատելութեան , վասն մատնութեան , եւ չարախօսութեան , վասն ագահութեան եւ արծաթսիրութեան , վասն ստութեան եւ երդմնահարութեան , վասն հպարտութեան եւ ամ

բարձրաւանդութեան ; վասն ռիսկալուծեան եւ ոտնահարու-
թեան, վասն իշխանասիրութեան եւ փառասիրութեան : Վասն
զի եղեւ քահանայն իբրեւ զմի 'ի ժողովրդեանէն. վասն զի կը-
րօնաւորք քաղաքականաց վարուք վարին . վասն զի ոչ զանա-
զանին 'ի միմեանց վանականք եւ աշխարհականք. այլ ամենե-
բեան խոտորեցաք, 'ի միասին անպիտանացաք. վասն որոյ մատ-
նեցաք 'ի ձեռս թշնամեաց մերոց ատելիք մեր յարեան 'ի վե-
րոյ մեր. անօրէնք նեղեցին զմեզ, եւ հակառակօրիչք կռիւ-
հարեցին յանխնայ. յաջ եւ յահեակ տանջէին, եւ յամենայն
կողմանց զգուէին. եւ առաջի տարածեալ ունեւրով զամենայն
տեսակ վտանգից, ահ, դուք եւ որոգայթ, եւ որ փախչի յա-
հէ, անկցի 'ի դուք. եւ որ ելանէ 'ի գոյ, անկանի յորոգայթ,
ըստ մարգարէին . եւ այս ամենայն եկն 'ի վերայ մեր վասն
մեղաց մերոց. եւ խտացուցաք զպարանոց մեր եւ ոչ խոնար-
հեցաք, սոռնգանեցաք պատուիրանի Տեառն եւ ոչ զղջա-
ցաք, այլ դարձաք սրտիւք մերովք յեղիպտոս :

Վա՛նդ երկիր Հայոց, գաւառ գեղեցիկ, աշխարհ արեւե-
լեան, հուպ առ Եդեմ, ծանիր գրաւութիւն քո. ընդէ՛ր տգե-
ղացար : Վա՛նդ բնակիչք բարեբաստիւք. ազգ. ընտիր, ժողո-
վուրդ սեպհական, քահանայութիւն, թագաւորութիւն, մար-
դարէութիւն, մարտիրոսութիւն, ծանիր զմեծութիւն քո, ըն-
դէ՛ր վրիպեցար :

Վա՛նդ տունկ տենչալի, դրախտ Աստուածատունկ. բուրաս-
տան բերրի, զրգանք գովելի . կնիք վայելութեան 'ի ձեռին
տեառն, եւ թագ արքայութեան 'ի ձեռին Աստուծոյ քոյ, ծա-
նիր զազնութիւն քո, ընդէ՛ր խոտորեցար :

Եւ արդ ո՛վ ողբասցէ զքեզ ըստ արժանւոյն . Յերեմիաս
չիք 'ի միջի, կամ այլ ոմն ողբերգակ : Եկեղեցիք քո հրձիգ
եղեն, յարկք քո տապալեցան, մանկունք քո գերի վարեցան,
զարինս քո հեղին որպէս ջուր շուրջ Վիտիւնիւ, աշխարհ ձեր
առաջի ձեր օտարք կերիցեն . Լքեալ թողաւ դուստր Սիոնի
իբրեւ զհովանի միգապահաց 'ի մէջ սեխենեաց եւ իբրեւ
զսաղաւար յայգւոյ. արկին զղիակունս քո գէշ թռչնոց երկ-

նից եւ գաղանաց երկրի, եղաք նախատինք դրացեաց մերոց, եւ այսն կատականաց թշնամեաց մերոց : Աւանդ կորստեանս, աւանդ թշուառութեանս, աւանդ ամայութեանս. եղծաք, ապականեցաք, կորստեան մատնեցաք, ընկալաք 'ի ձեռանէ Տեառն բաղմապատիկ զբաժակ բարկութեան, զբաժակ դառնութեան, զբաժակ վշտի : Եւ արդ զարթիր, արդ սորջացիր, զոնէ զգաստացիր, արի՛ կարդա առ տէր Աստուած քո, աղաղակեա՛ առ նա ցաւապին անձամբ. աղաչեա՛ զերեսս նորա, պաղատեա՛ առ նա անելով . Դարձ առ մեզ Աստուած փրկիչ մեր, եւ դարձո՛ զսրտմտութիւն քո 'իմէնք. Աստուած դու դարձեալ կեցո՛ զմեզ . եւ ժողովուրդ քո ուրախ լիցին 'ի բեզ . ցոյց մեզ Տէր զողորմութիւնս եւ զփրկութիւնս քո տուր մեզ :

Զարթո՛ զզօրութիւն քո եւ եկ կեցուցանել զմեզ . մի՛ յաւիտեան բարկանար մեզ Տէր, եւ մի՛ ձգեր զբարկութիւն քո ազգէ մինչեւ յազգ . մեք մեզաք՝ եւ դու բարկացար . այլ ներեա՛ Տէր, անսո՛ տէր, քաւեա՛ տէր, հաչտեա՛ տէր. ու զորմեա՛ տէր, փրկեա՛ տէր, կեցո՛ տէր :

Այսպիսիս թերեւս բարբառէին երանելի առաջնորդք մեր, այսպիսի՛ ձայնս արձակէին վաճառականք ամէնառատք, այսպիսի՛ թելագիր լինէին քարոզքն ճշմարտութեան, մշտէն հուգեւորք, գործօնեայք զեղեցիկք, բեռնաբեքքն շահաւաք, հարսնածուքն երանելիք, փեսաւերքն փառաւորք, առթողքն արիական, կուսատածքն պատուականք, վարդապետքն բաղդուսոցք, դպչեակքն դիւրահամբոյրք, դաստիարակքն գորովադուժք, դպրապետքն բարեակրք, հովիւք բաշտափառք, մատակարարքն երջանկացեալք, խմաստասէրքն մեծարգոյք, բարեբերքն բերկրալիւք, ճանապարհորդքն ճոխացեալք, սիւնքն հաւատոյ, ամուլքն եկեղեցւոյ, արմատքն անմահութեան, քանոնքն արդարութեան, չափքն իմաստութեան, յարդարիչքն օրինաց, հիմնացուցիչքն հաւատոյ, արձանք ամրութեան, պսակքն պճնութեան, զարդքն զգաստութեան, խաչարարք խմանալի, մատուռակքն ցանկալի, բարձրացուիչքն եկեղե-

ցւոյ, մխիթարիչքն տրտմեցելոց, սանձքն անզգամաց, փար-
թամացուցիչքն հաւատացելոց, դաւանողքն ուղղափառու-
թեան, հաստատիչք հաւատոց, նորոգողք կարգաւորութեան,
դարանակալքն իմաստութեան, պատմաբանիչքն փառացն
Յիսուսի, ողբերգակքն գովելիք. որք խնդութեան ոչ եղեն
խրախակիցք, այլ տրտմութեան դտան սղակիցք. որք ՚ի բեր-
կրութեան ոչ վայելին ընդ բերկրեալն, այլ ՚ի դառնու-
թեանն տխրեցան ընդ վտանգեալն. որք յանդորրութեանն
ոչ էին զուարճակիցք, այլ ՚ի թըշուառութեան գտան չար-
չարակիցք. որք ՚ի գերամարածութեան ոչ գտան բարձրա-
յեալք, այլ ՚ի տառապանսն նուաստացեալք. որք ցնծութեան
ոչ գտան դասակիցք, այլ ողբոցն եղեն ճայնակիցք : Եւ ապա
զինչ գործէին երանելիքն, զինչ խորհէին կամ զինչ զմտաւ
ածին. հեռանային յաշխարհէ. ինքեանք յինքեանս երթայ-
ին. զամայութիւն սիրէին. յանապատս բնակէին, լռութեան
տային զանձինս, աղօթից պարապէին, արտասուօք զոտս Տեա-
ռն թանային, մշտամուռնչ հեծեծանօք ընդ Աստուած խօսե-
լին. յառնաւոր տքնութեամբ գիշերն ՚ի գլուխ հանէին : Սո-
վալլուի զանձինս առնէին, ծարաւով տանջէին, ցրտակէզ եւ
սոթակէզ լինէին. լեշի մաշկօք շրջէին, խաբազանազգեստք
լինէին, այծէիւք զսպէին, թեփակերք լինէին, ընդովք շատա-
նային, պողովք ծառոց բաւականային, բռնովք զալարեօք
եւ արմատիք. սիրովն Աստուծոյ տոչորէին, սուգ մեծ ՚ի վերայ
ազգիս ունէին. բայց երկնաւորն յուսով մխիթարէին. ՚ի նե-
ղութեան եւ յանձկութեան տանջէին զմարմինս ՚ի խաչ հա-
նելով, կալօք եւ ցանկութեամբ հանդերձ : Աճէին, բազ-
մանային ճշմարիտ իմաստիցն հետեւելով, զգործ տեսութեան
ասպիճական առնելով. ՚ի բանից լռութեան գործովք բարոյք
լինէին, նախանձ բարի սովորեցուն շարժէին. եւ թէպէտ
ծածկեցին զմարգարիտան գեղեցիկս, եւ զտկանս պատուա-
կանս յինքեանս թաղուցանէին, բայց ստկայն սուղ ինչ յայտ-
նէին, փոքր ինչ ծանուցանէին. զոր օրինակ հուր ընդ յարդիւ
ոչ կարիցէ զանխանալ, այլ կամ ՚ի մարդ կանեալութեալ վա-

եղցի, կամ ՚ի փոքրագոյն սքոյ շարժեալ բոց արձակիցէ : այսպէս
 պիտի իմն կրէին կամ ՚ի մարդկանէ խնդրեալք կամ ՚ի հո-
 գւոյն շարժեալք, մեծադին գանձիւ լինէին զեկեղեցի, անդին
 մարգարտիւ զարդարէին զառաքաստ Սիրլնի : անպատում
 զարդուք զեղապաճոյճ՝ պճնէին զբամբիշն երկնաւոր արքայ-
 ին. ճառիւք ներբողինօք, պատմութեամբք հոգեւորօք, իմաս-
 տիւք զանմանալեօք, մեկնողական հանդիսիւք : Փայլեցին,
 պայծառացան, զարմանալիք ցուցան, երեւելիք եղեն, հիանա-
 լիք դտան, ցանկալիք տեսան, բաղձալիք հաւատեցան : ճշմա-
 րիտք, ճոխք. իմաստունք, մարութք, մեծք, առ արքն իք սուրբ :
 յորոց ոմանք գլուխք եկեղեցւոյ կացին, ոմանք ակի եղեն,
 ոմանք ձեռք հանդիպեցան, եւ ոմանք այլ ինչ : Քանզի քա-
 ղաք ՚ի վերայ լերին թաքչել ոչ կարէ, եւ ոչ ճրագ ընդ ծած-
 կութիւ զանխրլացի, վասն որոյ ազ եղեն երկրի, եւ լոյս աշ-
 խարհի, եւ քաղութի ապստանի ։

Եւ յօքան եւ այսչափ էր ահա Աստուածապաշտութեան հան-
 դէս երանելի աշակերտացն սրբոց Թարգմանչացն՝ զոյս ոսկի
 անկար գրիչ ականատես հեղինակին առաջի հայկազն ընթեր-
 ցողիդ աչաց զեղանի երանիօք պատկերացուցանէ. ընդ որ հայ-
 եցեալ զգա դու յողիդ եւ նմանօք լեր այնպիսում առա-
 քինեացն :

Բ. ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱՇԻՆ ԱՌԱՔԻՆԵԱՑ

ԱՐՏԱՇԵՍ ՏԻԵԶԵՐԱԿԱԼ ԱՐՇԱԿՈՒՆԻ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ :

Ինչպէս որ լուսինը ամառն սկիզբէն սկսեալ գիշերէ գիշեր
 աւելի սրայծառանալով աշխարհս կը լուսաւորէ՝ եւ բոլոր ա-
 րարածներուն բնական գեղեցկութիւնը կրկնապատկերով զու-
 արձալի եւ հրաշալի տեսարան մը կը ձեւացընէ : ասանկ ալ

Արշակունեաց տէրութիւնը Հայաստանին արեւելեան հորիզոնէն ծագելով՝ Հայկազանց համբաւը ու փառքը հետ զհետէ պայծառացընելով, անոր աննուաճելի զօրութիւնը հրաշալի կերպով մը աւելի ազդեւ ըրաւ բոլոր օտար ազգաց վրայ :

Ահաւասիկ Հայաստան՝ նոյն Արշակունեաց սերունդէն հզօր եւ կայտառ Արտաշէս մը ծնաւ, որ իր պատերազմասէր ընտելեանք՝ բարձր եւ վսեմ մտացը նշանները, 'իմանկութեանէ յայտնի ընելով, ազգին փառքը աւելցընելու համար իր ընելիք ապագայ մեծադործութիւնները ամենուն երեւակայել եւ դուշակել կուտար : Այս առիւծածնունդ արեւելեան հսկան, յայտնի է որ Վաղարշակայ դրած կարգադրութեամբը՝ 'իմանկութենէ ընտիր դաստիարակներու ձեռքով ուսմամբ եւ կրթութեամբ զարգացած ըլլալով, հարկաւ կարգացեր էր մեծին Աղէքսանդրի ըրած աշխարհակալութիւնները, որ իր կրակոտ եռանդուն երեւակայութեանը վրայ մեծ ազդեցութիւն ընելով՝ իր սրտին մէջ աւելի սաստիկ կերպով մտաւ այն տիեզերակալութեան ոգին, եւ երբոր իր գահը նստեցաւ՝ ամենէն առաջ տեսաւ որ ինքը Պարթեւաց թագաւորին երկրորդն էր : ասիկայ իր բնական հպարտութեանը եւ սաստիկ փառասիրութեանը դէմ գալով, իր հզօր զօրութեամբը Պարթեւաց Արշական թագաւորին իր իրաւանցը դէմ բողոքելու անգամ աչքը բանալ չտալով, նախադահուածն պատիւը յափշտակեց անկէց, եւ իր որդին Տիգրան Հայոց վրայ՝ եւ Արշական Պարսից վրայ իր իշխանութեան տակը թագաւոր դնելով, իր անուամբը եւ պատկերովն ալ ստակ կոխել տուաւ, եւ այս նախադահուածն աւելի հաստատուն նշան մը ըլլալու համար, Պարսկաստանի մէջ ալ պալատ մը շինեց : Իր Արշամայ աղջիկն ալ Պարսից Դարեհ թագաւորին նախարարներուն ցեղէն եկած Միհրդատ անուն Վրաց բոլշխին տուաւ, եւ անոր բաշտութեան եւ հաւատարմութեան վրայ համարմունք ունենալով, բոլոր Պոնտոսին եւ Կովկասեան լեռանց վրայ կուսակալ դրաւ :

Ահա այս կերպերով իր բոլոր երկիրները սահմաները աղէկ

մը ապահովցնելէն ետեւ, հրաման քաւ կըսէ Խորենացին ա-
րեւելքէն ու հիւսիսէն անթիւ գօլքեր ժողովել տուաւ, եւ իր
թէ աշխարհակալութեան եւ թէ զօրաց չափազանցը բազմու-
թեանը նշան մը ըլլալու համար, ամէն բանակած տեղերնին
տեղ մը որոշելով՝ բոլոր զօրացը մէյմէկ բար նետել կուտար,
որ ահագին բլուր մը կը ձեւանար այն տեղը. ասանկ մեծա-
մեծ պատրաստութեամբ փոթորկի նման զոռալով վաղեց սր-
շաւեց դէպ ՚ի փոքր Ասիայ, եւ այն տեղի բոլոր իշխանու-
թեանց հետ պատերազմելով յաղթելէն եւ անոնք Հայկու-
զանց իշխանութեան տակը հպատակելէն ետեւ, հազարաւոր
նաւեր ինջեցուց Միջերկրական ծովուն վրայ. որուն համար
Խորենացին օտար աղղաց պատմութիւնէն աններով կըսէ. թէ
ամէն աշխարհակալ թագաւորներէն աւելի հզօր եւ զօրաւոր
էր Արտաշէս. որ այն ահեղ արշաւանքը երկրի վրայ քաղելու
պէս ծովուն վրայ ալ դիւրութեամբ կը շարունակէր, բնու-
թեան որ եւ իցէ արդելքներուն յաղթելով :

Ահա այս կերպով Միջերկրական ծովուն մէջի շատ կղզիներու
տիրելէն ետեւ. բոլոր Յունաստանն ալ զարհուրեցուցանելով,
անոր մեծ մասին արիութեամբ եւ քաջութեամբ տիրեց :
Բայց երբոր Հայաստան իր այս յաղթութիւնները քանի որ
կը լսէր ու կուրախանար, աւանդ որ դիւցադնոյն փառաւոր
յաղթանակներով կրկին իր դասը նստիլը տեսնալու տեղ՝ անոր
աղաւաղելի եւ սգալի մահուանը տարադէպ լուրը լսեց :
Յայտնի չէ թէ ինչ պատճառաւ զօրացը մէջ խռովութիւն
մտնալով մեռուցին զինրը, որ օտարաց սիրտը անգամ այրեց.
ինչպէս Խորենացին Պոլիկրատէս Յոյն պատմիչէն աններով
կըսէ. թէ. « Աւաղ բազմին միայն թէ ՚ի տէրութեանն եւ ոչ
՚ի փախստեան էր վախճանեալ : »

Այս Արտաշէսին պանծալի գործքերուն վրայօք կարելի է
Խորենացին ազգային պատմութիւն մը գտած ըլլայ, բայց
գիտնալով թէ օտար ազգաց գովութիւնը բնականաբար աւե-
լի նախապատիւ եւ զօրաւոր է, անոր համար անոնց պատմիչ-
ներէն աններով կըսէ. « Վէհ ինձ Արտաշէս պարթեւ քան

զՄակեդոնացին Ալեքսանդր, զի կալով յիւրում աշխարհին
 իշխեաց թերայ եւ Բաբելոնի » : Արդարեւ Ալեքսանդրէն
 ալ մեծ էր կրսէ, որ իր զօրութիւնը բոլոր աշխարհն մէջ հըռ-
 չակուած ըլլալով, առանց թերայ եւ Բաբելոնի առջեւ ար-
 չաւելու գիւրու թեամբ տիրեց անոնց : Նոյնպէս Եւադրոսին
 բրտած մանրամասն եւ ճիշտ դատողութիւնները մէջ բերելով
 կրսէ : Թէ Ալեքսանդրին Դարեհին հետ ըրած պատերազմը
 Արտաշէսին ըրածին հետ բազդատելով՝ շատ փոքր է : Վասն
 իի անոնց զօրքերուն բոլորը մէկէն նետ նետած ժամանակին՝
 ցորեկուան լոյսը միայն թէ քիչ մը աղօտացաւ : Բայց Արտա-
 չէսին զօրացը շատութիւնը այնչափ անոնցմէ աւելի էր, որ
 ամէնը մէկէն նետ նետած ժամանակին, արեգական լոյսը խա-
 ւարեցնելով ցորեկը գիշերի դարձուցին : Եւ լեռներուն վրայէն
 փազած հեղեղները՝ դեռերը չկրցան առատացնել, վասն զի զօ-
 րաց խմելովը մէկ կողմանէ կը նուազէր ջուրը : աս ալ իմա-
 նալու է, թէ այն ժամանակը երկրագործութիւնը որչափ
 ծաղկած է եղեր, որ այնչափ անթիւ բազմութեան ամէն
 մէկ բանակած տեղերին անբաւ հաց կը հասցընեն եղեր : Եւ
 զօրաց որչափ ըլլալը հասկնալու համար համրելը շատ մեծ դժ-
 ուարութիւն ըլլալով՝ չափելով միայն կը հասկցուէր :

Տիեզերակալ Եգիպտացի երկրորդ Քսէրքսէսս այս Արտա-
 չէս, այնչափ մեծազօր ինքնակալութեամբ եւ ճոխութեամբ
 գրէթէ բոլոր աշխարհի տիրելէն ետեւ : որչափ առաքիւնու-
 թեան հակամիտ եւ ընտիր կերպով դատաւարակուած էր, որ
 որչափ յաղթութիւնները շատնար եւ փառքը էվելնալ, այն-
 չափ ալ բնական հանճարով մը կամաց կամաց իր փառասիրտ-
 թեան գինամոլութենէն սթափելով՝ աշխարհիս ունայնու-
 թիւնը կիմանար ու կրխոնարհէր : Եւ ոչ թէ Ալեքսանդրի նման
 բրտութեամբ եւ անտուութեամբ աստուածներուն կարգը ան-
 ցնիլ ուզեց, հապա՜ « Աւաղ փառացս անցաւորի » ըսելով
 արցունք թափելով լացաւ : Արդարեւ այս առաքինազարդ վեհ
 դիւցազնոյն այս սրտաշարժ եւ երկնից ակնարկութիւնը իր
 վրայ դարձունող ճշմարիտ Աստուածապաշտի խօսքը եւ վար-

մոռնիքը իր պատերազմներուն պատճառաւ ստացած թշնա-
մեաց սիրտը կակուղցուց . եւ իր բոլոր բարեկամները ապշեցու-
նելով իրեն հետ ՚ի լաց շարժեց : որ անանկ ինքնակալին մար-
դարտանման արցունքը բնաւ երբեք չէին տեսած . վասն զի իր
բոլոր կենացը մէջ լալու պատճառ մը չէր ունեցած : Արդաւ-
րեւ՝ Աղէքսանդր երեւելի իմաստասէրներուն քով կրթուած
էր , բայց չունեցաւ ասանկ փիլիսոփայական ընտիր գիւտ մը .
այն գիւտը՝ որ բոլոր աշխարհի մէջ մէկ հատիկ իմաստուն Աս-
տուածապաշտն Սողոմոն , իր ամէն վարքը զրեւին ետեւ՝ ունայ-
նութիւն ունայնութեանց ըսելով կը կնքէ ու կը վերջացնէ
իր բոլոր հրաշալի առականութիւնը :

Թէպէտ եւ այս դիւցազունս տեսնալով որ իր այնչափ պա-
տերազմները եւ հեռու աշխարհները իրեն հպատակելը օ-
գուտ մը չըրաւ իր հայրենեացը իր ազգին , ինչպէս որ բոլոր
աշխարհակալներուն ալ սովորական է իրենց այս պահառու-
թիւնը , որ տերութեան սահմանները ընդ արձակելէն զատ՝ ի-
րենց հայրենեացը մէջ հարկաւոր կարգադրու թիւն մը ընե-
լու չեն ջանար . բայց Արտաշէս իր հայրենեացը սպազայ եր-
ջանկութեանը համար այս մեծ բարերարութիւնը բրաւ , որ իր
որդին Տիգրան վարաժ անունով իշխանին յանձնելով կրթել
տուաւ , որ մեռնելէն ետեւ իր գահը նստեցաւ . եւ ոչ թէ
ուրիշ աշխարհակալներուն պէս իրեն մահուանէն ետեւ ազգը
անտէր թողլով իրեն կենդանութեան ժամանակը ստացած
անթիւ թշնամիները ազգին վրայ յարուցանելու պատճառ ե-
ղաւ :

Թէ որ հիմակուան քաղաքականութեան նայելով Արտա-
շէսի աշխարհակալութեանը համար անաչառ զուրցելու ըլլա-
մը , մէկ կողմանէ պարսաւելի է . վասն զի քաղաքականացեալ
եւ կրթեալ թագաւորի մը ասանկ բռնաւորութիւն չը փայլեր .
բայց մէկ կողմանէ ալ կարդարանայ : վասն զի ան տոնն իրա-
ւունք ազգաց ըսուածը եւ արդարութեան սահմանները՝ ինչ-
պէս որ պէտք է չէին հասկցած : անոր համար Արտաշէսներ
կիւրոսներ եւ Աղէքսանդրներ պակաս չէին ամէն ազգաց

մէջ : Բայց կրնայ մէկը ըսել Թե. աւելի անաչառ քննելու ըլ-
լամբ, իրենց կռապաշտութիւնն ալ ամենամեծ պակասութիւն
էր. անոր ո՞վ ինչ կրնայ ըսել :

Բայց Արտաշէսի աշխարհակալութիւնը կերպով մը ազգին
մեծ փառք կընծայէ, վասն զի մեր ազգային պատմիչները
Աղէքսանդրի Դարեհի պէս աշխարհակալներուն բռնաւորու-
թիւնները խօսքով եւ գրով պախարակելու ժամանակնին,
կարելի է օտարազգիք մեզ նախատէին, Թէ դուք անանկ հան-
ձարաւոր Թագաւոր մը չունէիք, եւ այն հնարագէտ եւ քա-
ջութիւն ունեցող ազգը չէք՝ որ այսպէս աշխարհակալութիւն-
ներ ընելու կարող ըլլայիք, անոր համար հիմա դուք ալ անոնց
նախանձելով կը պարսաւէք, որ ձեր վատութիւնը ու տկա-
լութիւնը ծածկուի ըսելու պիտի համարձակէին :

Սասնկ հզօր Արտաշէսներու զօրութեամբը փառաւորուած
հաշակաւոր եւ բարեբարոյ ազգի մը տերութեան մը իշխա-
նութեանը տակ՝ բազմաթիւ օտարազգիք հպատակելով Հայկա-
զանց փառաց եւ պաշտպանութեանը հովանիին տակը ըլլալնին
իրենց պարծանք կը համարէին. ուր մնաց որ ազգերնիս ասոնց
բոլորը կորանցընելէն եւ մոռանալէն ետեւ, ուրիշ օտարական
ազգաց իշխանութեան տակը նուազ եւ աննշան ազգի մը
նման ստրկութիւնը յանձն առնելով, եւ անոնց Հաւատարիմ
ծառայութիւններ ընելով՝ կեցցես (ածերիմ) մը լսելու փառքը
ստանալու մուրացկանն եղեր է. ահաւասիկ այս փառքով ազ-
գերնիս վարձատրված ըլլալով, շարունակ ստրկութեան եւ
նուազութեան մէջ զրահելու նշան մըն է. շնորհակալ եմք
այն ազգիս լսելու փառքէն. այսչափ երկար ժամանակէ ՚ի-
վեր գործածելով գործածելով այն փառքին յարգը չպակսե-
ցաւ տակաւին չ'հինցաւ չ'փոտեցաւ : Այսչափ երկար ժա-
մանակ է ազգը օտարաց համար ըրած միամիտ ծառայութիւն-
ներուն եւ ազնուական հաւատարմութիւններուն փոխարէն
ինչ արժանաւոր կերպով վարձատրուեր է. Թէ որ մեր ազգին
տեղ ուրիշ ազգ մը ըլլար ու այնչափ արդիւնքներ ցրցունէր՝
շատոնց իրենց արժանաւոր եղած փառքը մեծութիւնը ձեռք

ձքեր էին . ուր է այն իրանունք ազգաց ըսուած արդարաւ
 թեան կշիռը, որ տակաւին իր կատարելութեանը հասած չէ .
 այն լուսաւորեալ աննախանձ վեհանձն գաղափարը՝ արդեօք
 որ ազնիւ ազգը պիտի ըլլայ աշխարհիս վրայ կանդնեցընող .
 այն մեծագործութեան փառքը՝ արդեօք որ քաղաքակրթեալ
 ազգը պիտի տոանայ . այն յաւերժական յիշատակաց արժանի
 կոթողը աշխարհիս մէջ . որ ազգը պիտի կանգնէ . ու իր անունն
 ալ անմահացնէ՝ եւ միշտեւ յաւիտեան անունի փառք մը ստա-
 նայ . որ Արտաշէսներն Աղեքսանդրներն իւրոսներն ալ չեն
 տեսած եւ չեն զգացած . Բայց ամենէն աւելի պէտքը չէ
 մոռնալ Օսմանեան հզօր բարեխնամ Ինքնակալ Նսյսնի մեր
 ազգին ըրած բարերարութիւնները եւ լի ու լի կերպով ըրած
 փառաւոր վարձատրութիւնները . որ քաջ կը ճանչնայ ազգին
 հաւատարմութիւնը՝ եւ անիկայ ամէն ազգերէն աւելի կը սի-
 բէ եւ կը յարգէ . ու իր հովանաւորութեանը տակ պաշտպանե-
 լովը՝ ազգերնիս երջանիկ ըրած է . արդարեւ իրեն բարերարու-
 թեանը համար միշտ շնորհապարտ եմք, եւ ազգերնիս այս լու-
 սաւորեալ դարուն մէջ միշտ գոհ եւ ուրախ կերպով իր ցան-
 կացած խաղաղութիւնը կը վայելէ :

ՏՊ. ԳԱԼՓԱԿՃԵԱՆ .



Գ . ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

ՎԱՆ ԿԱՄ ՀԱՄԻՐԱՄԱԿԵՐՏ

(ՏԵՄԵՐԵՄ . 178)

Ա . ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍ ԵՆԴԵՅԻ, որ ունի հնաշէն բարձրակամար եւ փառաւոր Տաճար մը՝ 22 ոտք լայնութեամբ եւ 44 ոտք երկայնութեամբ . իւր կաթուղիկէի ծայրէն մինչեւ ստորին յատակի միջոցն ալ՝ դրէթէ իւր երկայնութեանը հաւասար կուգայ : Պահարաններ ունի թեւերուն տակը ծածկուած արուեստաւոր ճարտարութեամբ շինեալ : Իւր ամրակառոյց որմունք բաղկացնող թխագոյն քարերուն վրայ՝ բեւեռագրեր շատ կան : Ոմանք ասոր հնութիւնը մինչեւ կռապաշտական դարերու կ'հասցնեն՝ բայց հիմնաւոր վկայութիւն մը չիկայ : Քաղաքիս եւ իւր Այգեստանեացը մէջ մինակ այս Տաճարս ունի կաթուղիկէ . որն որ Ռ . Ղ . Ե . Հայ թուականին շարժէ վտանգեալ լինելուն համար՝ կրկին նորոգուերէ : Ունի 205 տուն ժողովուրդ 2 Բահանայ :

Բ . ՍՈՒՐԲ ԱՄԻՆԱՅ ԵՆԴԵՅԻ . Տաճարն փոքրիկ քարաշէն ժամատունն փայտալարի եւ նորակերտ : Այս եկեղեցիս որ վերնոյն հետ գրեթէ կից՝ մէկ պատմը միայն կար մէջ տեղերն, անցեալ տարի նոյն միջնորմն վերցնելով իրարու հետ միացուցին : Ունի 197 տուն ժողովուրդ 2 Բահանայ :

Գ . ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ, հիմնարկեալ 'ի Շուշանիկ դստերէ մեծին Վարդանայ Մամիկոնէի, 'ի յիշատակ նահատակութեան պանծալի անուան հօր իւրոյ . ինչպէս որ Տաճարի դրան ճակաւ

տին վրայ քանդակուած է ունի միջակ մեծութեամբ լուսա-
ձեմ տաճար մը կամարակապ ամրակառոյց եւ ժամատուն
մը փայտայարկ եւ փառաւոր :

Այս տեղ մինչեւ հիմայ անկորուած պահուած կրմնայ ե-
րանեղոյն Վարդանայ բաջին զարմանադործ Աջն . որով
Պարսկց այնահեղ աւերման զիմադրաւ հանդիսանալով Հայ-
աստան Եկեղեցւոյ լուսալիր ճրագն մինչեւ հիմայ վառ պա-
հեց . որ թղաչափ մեծութեամբ արծաթապատ եւ ոսկեղծ
պահարանի մէջ զետեղուած է , ամենեւին ազատ ո՛ր եւ իցէ
պատահարաց :

Ա՛նձին Վարդանայ չնաշխարհիկ գործոցը եւ Հայրենա-
սիրական երախտեաց աղոյիւնքը ճանաչող հայ մը՝ արդեօք
ի՛նչ աստիճան հոգւոյ զգացմունքներ պիտի չիմանայ , երբոր
իւր սուրբ հաւատոյ եւ ազգութեան հիման քարը անշարժ
պահողի մը նուիրական մասունքը՝ իւր կարօտակէզ աչքին դի-
մաց տեսնէ . եւ այն՝ ի հազար ամաց անտի անկորուած մնա-
ցած : Եթէ Եւրոպայ իւր Հայրենասէր Առաքիւնեաց ոսկերու-
տիք ճոխ հանդիսներով եւ պարմանօք կը պատուէ , հապա-
քանք առաւել Հայաստան իւր սուրբ հաւատոյ եւ հայրե-
նեաց համար արիւն թափողի մը փափաքելի ոսկերաց կը պար-
տաւորի պատիւ եւ մեծարանք մատուցանել : Անձուկ կա-
րօտանօք համբուրեցի այն նուիրական Սուրբ աջն Վարդանայ
պարսկալան եւ Արծուոյս թեւերով ցանկացայ հաղորդել բո-
լոր Վարդանասէր հայկազանց . որ անոնք ալ իրենց որրտի խո-
րին յարդանաց երախայրիքը խմանալի շրթանց համբուրիւ
մատուցանեն այն սրբացեալ պարսկալան աջոյն . զի բարեխօ-
սութեամբ մեծին Վարդանայ զթացեալ երկիւնք՝ շատ նոր
Վարդաններ կանգնեցնէ ի պաշտպանութեան ուղղափառ
հաւատոյս եւ սպին : Այս Սուրբ Վարդան Եկեղեցին եւս
ունի 2 . Բահանայ եւ 266 տուն ժողովուրդ :

Դ . Տէրաճար Էկեղեցի . որոյ տաճարն փոքրիկ քարաշէն , ժա-
մանատունն փայտայարկ : 1766 էն առաջ քիչ միջոց մը Վա-
րդայ սուրբ Խաչամասն այս Եկեղեցիս մնաց . որուն յիշմար-

ծին ըստւած փոքրիկ Եկեղեցին փոխադրուելուն պատճառաւ, քաղաքիս այն ժամանակուան ոստիկանութիւնն ապօրինաւոր պահանջմամբ 600 դահեկան տուգանք առերէ այս Տիրամայր Եկեղեցիէն, ինչպէս որ տարեգրութեան մէջ յիշատակուած կայ : Ունի 172 տուն ժողովուրդ եւ 2 Բահանայ Ե. Սուրբ Էջիֆանի, կամ Ս. Նշան Եկեղեցի . Այս եկեղեցիս ինչպէս որ յայտնի է առաջ Էջմիածին կրտսէր, որ է իւր բուն անունն . բայց երբ որ Առաջնորդ Գրիգոր վարդապետի ձեռամբ 1766 ին Վարազայ Ս. Նշան փոխադրուեցաւ հոն, նախնի անուն կրտսեցնելով Ս. Նշան կոչուեցաւ ի պատիւ մեծահռչակ աւագ Ս. Նշանին Վարազայ :

Ունի մէկ փոքրիկ տաճար մը որուն աւազանի տեղ սրբազանեալ պատուհանի մը մէջ ամփոփուած կըմնայ նոյն Վարազայ Ս. Խաչն . եւ ամէն ուրբաթ օր անխափան Սրբադործ Պատարագ կ'մատուցուի նոյն պախարանի առաջ : 108 տուն ժողովուրդ ունի եւ 2 Բահանայ :

Այս Եկեղեցուն անմիջապէս կից է Վանայ Հայոց Առաջնորդարանն, ուր կընտրի Վան նահանգի ընդհանուր Առաջնորդն, եւ կիշխէ Վանայ Կուսակալի իշխանութեանը տակը եղած բոլոր Հայ հպատակաց :

Զ. Սուրբ Սահակ Եկեղեցի, Տաճարն փոքրիկ քարաշէն, ժամատունն փայտայարկ եւ մէկ փոքրիկ մատուռ մը իւր քովը կից Սուրբ Սաբիթանոս անուամբ . ունի 2 Բահանայ եւ 135 տուն ժողովուրդ :

Է. Սուրբ Ծիբեանոր Եկեղեցի . տաճարն փոքրիկ քարաշէն ժամատունն փայտայարկ . ունի 1 Բահանայ եւ 110 տուն ժողովուրդ :

Այս քաղաքամիջին Եկեղեցեաց հրաման չիկար միջեւ հիւմայ ըստ հայաստանեաց ջերմեռանդ սովորութեան կոչնակ զարնել ի պաշտաման ժամանակն . բայց սոյն միջոցիս խնդրանք Պ. Պօղոսի Աստուածատուրեան Վանեցոյ եւ ազգասէր պաշտպանութեամբ Գալուստ Աղայի Մաղաքեան՝ Բ. դուռն հաճեցաւ ազատ հրաման շնորհելու որ Այդեապանու եկեղեցի

ցեալ նման իրենք ալ կոչնակ զարնեն 'ի ցնծութիւն Ջերմե-
ռանդ Աստուածապաշտից Հայ ժողովրդեան :

Արդարեւ գովութեան խիստապէս արժանի է մանաւանդ
վերոգրեալ հայրենասէր Գալուստ Աղայն Մաղաքեան , որ
ինքն թէ եւ երկար ժամանակաւ հեռացեր է իւր քաղաք
հայրենեաց ծոցէն , բայց սրտիւ ոչ երբէք հեռացած է այս
պիսեօք իւր հայրենասիրական պարտքն վճարելու առաքինա-
կան պարտաւորութենէ :

Տիրամայր Եկեղեցւոյ կից շինուած է քաղաքիս կրկնայարկ
փառաւոր եւ մեծատարած մայր Վարժարանն : ուր տեղ կըն-
թեռնուեն 150 էն աւելի մանկուիք քաղաքացի եւ այգեա-
տանցի : Այս վարժարանիս ծախքը վերոգրեալ եօթ Եկեղե-
ցեաց անշարժ կալուածոց եկամբտից կը հոգացուի :

Նորահաստատ Գրատուն մի եւս կայ , ուր ժողոված է շատ
տեսակ գրեանք . թէ ընթերցասիրաց փափաղը լեցունելու եւ
թէ վաճառելու համար : Ուստի եւ ուզողը կարողէ երկու
երեք ժամով հոն երթալ եւ ուզած գիրքը կարգալ ընկերա-
գրութեան կանոնով : Ուսման տէր ունեցող պատանիքն ալ
կարող են պայմանաւոր կերպով հոն գտնուիլ եւ ուզած դա-
սերնին առնել շարունակաբար :

Ասոնցմէ 'ի զատ' կան քաղաքիս մէջ նա եւ կաշիքի եւ ջի-
թի երեսելի գործարաններ եւ մեծ հոյակապ բաղանիսմը ,
որ այս տարի երկրիս Ազանաւոր վաճառական Սապոնձեանց
մեծապատիւ Հայրապետ աղայն' իւր վրայ առնելով մեծա-
ծախ աշխատութեամբ սկսերէ նորոգել :

Իսկ անուանի , բարձրակատար եւ անմատչելի վերնտրերդն
Պանոյ , քաղաքիս հիւսիսային կողմն ամբողջ պատած է ուղ-
ղակուոր ահեղ բարձրութեամբ . որուն տարածութիւնը ծո-
վու կողմէն ուղղակի յարեւելս ձգուած է' կէս փարսանո-
չաւի : Այս անմատչելի քարանցաւիս չորս բոլորտիքը փոր-
ուած է Շամիրսամ մեծադործ թաղուհւոյն գտնձատուն կար-
ծուած Այրեր եւ բեւեռադրեր . որոնց համար խորենեան
Ս . հայրերնիս կրտէ : “ Իսկ զընդդէմ արեգական կողմն ան-

« ձաւին . որ եւ ոչ գիծ մի երկաթոյ այժմ վերոգրեալ ոք կա-
 « րէ , զայսպիսի կարծրութիւն նիւթոյ՝ պէսպէս տաճարս եւ
 « անեւակս օթից եւ տուննս գանձուց եւ վիհս երկարս , ոչ
 « գիտէ ոք՝ թէ որպիսեանց իրաց պատրաստութիւն հրաշագոր-
 « ծեաց : Իսկ զամենայն երեսս քարին իբր գլխաւ զմոմ հար-
 « թել բազում գիրս ՚ի նմայ գրեաց , որոյ հայեցուածն մի-
 « այն զամենայն ոք ՚ի զարմանս ածէ » : Այս մեծագործ
 փորուած այրեր տասն հատէն աւելի են , որոնց միայն երկու
 հատին ձիշդ ստորագրութեամբ չափն հոս դրինք՝ մնացեալ-
 ներն նոցին համեմատութեամբ իմանալն բաւական համարե-
 լով : Բարանձաւիս արեւելեան հարաւ ձգուած թեւին վը-
 լայ՝ 70 ոտնաչափ բարձրութեամբ քարաժայռի սկիւղ փոր-
 ուած է մեծ այրն՝ որուն դուռը յարեւ բացուած բոլոր քա-
 ղաքի վրայ կ'նայէ . նախ անհարթ ապառաժն երեսուն ոտնա-
 չափ բարձրութեամբ եւ թանձրութեամբ տաշելով , վար ի-
 ջած է : այրի դրանը առաջ հարթայատակ լայն միջոց մը
 ձգելու համար , անկէց ետեւ՝ վեց աստիճան նոյն յատակէն
 բարձր այրի դուռն փորուած է , 8 մեծ ոտք բարձր եւ 4
 ոտք լայն : Այրի մէջ մտնողը անոր ճարտարարուեստ փոր-
 ուածքին եւ փառահեղ տեսարանին վրայ կ'զարմանայ , ար-
 դարեւ մեծագործութիւն Շամիրամայ կարէ պարծենալ : 24
 ու կէս ոտնաչափ է այրի երկայնութիւնը , 17 լայնութիւն
 եւ 15 բարձրութիւնը : Մէջն կայ երեք հատ եւս կրկնա-
 յարկ այրեր . որոնց երկայնութիւն է 13 ու կէս ոտնաչափ
 եւ լայնութիւն 8 : Ասոնց դռները ուղղակի իրարու կ'նային
 5 ոտ բարձրութեամբ : Ճակատի ներքնայրի մէջ գահաւո-
 թակի նման նստելու բարձր տեղի շինուած է :

Այս ահարկու շինութիւնները՝ հիմայ ամուրացութեան մէջ
 մնացած բազմաթիւ վայրենի աղաւնեաց բոյն դարձած են :
 Եւրոպացի ճանապարհորդներ 1843 ին ասիկայ զննեցին . ու
 լոնց անուն Եւրոպացի տառիւ ստորագրած կայ այրիս մէջ :

Երկրորդ այրն ասկէ քիչմը հեռու Ս . Վարդան եկեղեցւոյ
 ձիշդ վրան է . փոքրիկ դռնով լայն 17 ոտ , երկայն 22 : Ասոր

Համար կրսեն թէ Դամիրամ Թագուհին բաղանիսն է եղեր .
ըստ որում իւր միջին բոլորակերէն տարանաձեւ քաշուածներ
կան , ասոնց վրայ ալ կէս թղալանի բոլորակ փոս փոս տեղեր
կան . որոնց Համար ալ կրսեն թէ աճառ գներու տեղեր են եւ
այլն :

Ասոնցմէ ետեւ դիտելու եւ զարմանալու բաներէն , բեր
դին չորս կողմի սրահնամաւոր բեւեռագրերն են որոնցմէ երեւ
անքիմ բերդի տիպէտն 60 արք գետնէն բարձր քանդակուած
բազմաառջ քանդակներն է . որուն Համար կրսեն թէ Պարսից
Քսէրքսէս Թագաւորի եւ Արդեստ անունով ուրիշ անծանօթ
Թագաւորի մը յիշատակագրերն են :

Պաշարիս այժմեայ պարսպէն դուրս բերդի Հիւսիսային
կողմը երկու կամարաձեւ փորուածներ կան . ասոնց խորութիւն
5 սոս է . բարձրութիւնը ճշդիւ չիմացուեր . ըստ որում թանձր
հողով լեցուած են : Առաջնայն մէջ 30 տողէն աւելի բեւե
ռագրեր կան : Իսկ երկրորդին միայն մեծ խաչ մը վրան 3 .
Ղ . Ը . տառեր փորուած եւ պատուանդանին վրայ այս հայ
անունն՝ ԶԳՈՒԳԻՆ՝ Ասոնցմէ քիչմը 'ի մուտս կոյս մեծ այր
մը եւս կայ , դրան մէկ կողմը բեւեռագիր , նմանապէս երեք
պատուհանաձեւ տաշուածքներ բեւեռագրերով : Որոնցմէ եւ
տեւ կուղաց բոլորաձեւ աշտարակ մը քարաժայռի ստորտն
երկնցած . այս աշտարակիս հիման մեծամեծ քարերուն վրայ
Պ . Պ . Ղ . թուականներ կ'արդացուի : Կերեւի թէ ասոր մօտա
կայ տեղեր Հայոց Եկեղեցի կայ եղեր , որուն քարերով այս
բոլորաձեւ աշտարակը բարձրացեր : ձեռամբ տաճնիկ կուսա
կալաց :

Երրդիս արեւմտեան ծայրի (Իսխէլայ Քափուսի) ըսուած
տեղոյն զարմանալի մեծահատոր քարերուն իրարու վրայ ար
ուեստաւոր շարքն՝ տեսնալու արժանաւոր բան է . որն որ
Դամիրամայ մեծագործ ութեան մնացորդք կ'արեն Համարուիլ :
Այս շարքերուն ծերպերէն առատաճուր քարեհամ աղբերա
կունք կը հոսեն՝ բոլորովին աննման քաղսրի միջի անախոյժ
ջրերուն :

վ) երևաբերդին մէջը հիմնոյ հնաւթեանն մասին դիտելու արժանաւոր բան մը չէ մնացեր. մէկ ներակերտ մզկիթ մը կայ՝ պատերազմի մթերանոցներ եւ զօրաց օթագայելու տեղումանք թոյց բարձրութիւնն անաւոր է եւ վրայի թնդանօթներն շատ մեծամեծ : Այս հրազէքները հարաւային կողմանէ քաղաքն իրենց բարձր հովանաւորութեան տակն ունենալով կը պաշտպանեն, հիւսիսէն ալ զվերնաբերդն՝ անհրկեց տեսքով :

Ետաքրքրութեան արժանաւոր բան են նաեւ Գազկայ Արծրունւոյ սանդխտաձեւ տաշուածները, որ կերելի այս բերդիս կողերուն վրայ. ինչպէս որ թովմա Արծրունին ալ զարմանալով կ'պատմէ . բայց ասոնցմէ որն բոլորովին աղարտեալ անպիտան մնացած է, որն ալ անդործածելի աժմեան դրուած է :

(Պէտի շարունակութիւն) :

Գ. ԲՈՒՐԱՍԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔՆՈՒԹԵԱՆՅ

Վնճիք ՅԱԿՈՂ. ԴԺՈՒԱՐՈՒԹԵԱՆՅ ԱՇԽԱՐՀ

ՔԱՆ ԶԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ,

(Թանգարան խրապոս իճարան)

Համբերութեան) :

Համբերութիւնն ամէն առաքինութեանց դաստիարակն լինելով՝ շատ աշակերտներ առաջած է. որուն մարգարանը հրահալելեաց բալին նման մարդիկը զտելով դուրս կը հանէ եւ պիտի շարունակէ մինչեւ աշխարհիս կատարածն : Յուսալից համբերութեան կարծրադոյն վէմն՝ բնաւ մէկ վնաս մը չի

կրքեր թէպէտ եւ խոխոմաճայն թնդմամբ զարնեն իրեն կապն
նանային ձիւնախաղխաղ հեղեղներն : Ու թէ որ ծովու եւ
զերք ալ գտնուի, անոր մրկատանջ վրոխադէզ ալեացը հետ
մարտնչելով՝ ետ կ'դարցունէ անոնց յանդուգն յարձա
կումն : Աշխարհիս տարժանելի վշտեր չեն կարող յաղթել
համբերածար սրտերու : Կ'նմանին եւս սյնպիսի մարդիկ
հաստարմատ բնոյ երկնուդէջ ծառերու, որոնց երբոր անհզա
մրճունջ քամին կ'զարնէ՝ մինակ թէ տերեւնին փոքր ինչ այս
եւ այն կողմը կ'խոնարհեցնէ : Իրենք իրենց արմատին վրայ
միշտ անշարժ հաստնառութեամբ կեցած են : Անոնք որ համ
բերութեան մարզարանին մէջը խկսպէս կրթուած են՝ չեն
խռովիր բնաւ աշխարհիս բազմատեսակ ցաւալի վրջտերէն :
Թէպէտ եւ մահաբեր լինելն անգամ գիտցուի : Այս տեղ
եղիտի հանդիսանայ այն համբերութեան մարգարանի աշակեր
տաց չնաչխարհիկ Գործքերը՝ իբրեւ անջնջելի վկայք ճշմարտու
թեան :

Մարդկութեան երկրորդ հայր՝ Նոյ նահապետին վրայ
գեղեցիկ կ'փայլէ այս առաքինութեան ձիւքը, որով անհամար
դժուարութեանց եւ նախաձեռնաց համբերեց, երբ մարդկայ
ինս նեւի փրկութեան տունը կրկազմէր . անդեօք անոր հա
րիւրամեայ աշխտութիւնն ի զուր գնաց, չէ՛ կ'նայիս որ՝ այ
ցելուն Աստուած կը պսակէ զանի իւր համբերութեան հոն
կ'սին մէջը՝ ազատելով համատարած ջրհեղեղէն իւր համբե
րութեան հաւատարիմ աշակերտն :

Այսպէս ալ հայրն հաւատոյ Աբրահամ, նոյն համբերու
թեան մարգարանին մէջ լաւ մը կրթուելով՝ շատ դժուարու
թեանց յաղթեց, որոնք որ իւր պանդխտաբար շրջադայու
թեան ժամանակին չորս կողմն պատած էին : Յաղթեց՝ որով
Հայր հաւատոյ եւ Հայր ազգաց բազմաց անուանեցաւ :

Կուգոյ ասոր ետեւէն Յակովբ նահապետն . կ'տեսնես
որ՝ անօգնական մէկու մը նման՝ մէկ գաւազան մը մինակ
ձեռք բռնած՝ Միջագետք կերթայ, իւր հարազատի կատա
ղութենէն փախչելով : Այն տեղը լաւ կը կրթուէ Լաբանայ

իւր բարեկամին խաբէութեանց, խորամանկութեանցը եւ շնորհ
տեսակաւոր վտանգներու համբերելով. մինչեւ որ՝ համբերու-
թեանց վարձադրիչն Աստուած զինքն իւր հայրենիքն կը դար-
ցունէ մեծ հարստութեամբ : Յայտնի բանէ որ այս դժուա-
րութեանցը չհամբերէր՝ օրմը չէ օրմը Եսաւաց կատաղի կրից
զոհ պիտի լինէր :

Քաջ կրթուած դուրս ելաւ այս մարզարանէն՝ իսկ նկարա-
դիրն համբերութեան զարմանալին Յովբ, որ ինչ մեծութեանէ
ինչ չքաւորութիւն եւ ինչ երջանկութեանէ ինչ թշուառու-
թեան հասաւ. մէկ կողմանէ գէրի կերթար իւր բազմաժողով
հօտ ոչխարաց եւ արջառաց : միւս կողմանէ սիրելի զա-
ւակները վրատակներու ներքեւ հեղձամղձուկ կը ծածկուէին :
Այլ մեծի համբերութեան՝ նա միայն անխռով խորհրդով եւ
զուարթ դիմօք այս կը բարբառէր, « Տէր ետ եւ Տէր էաւ
եղիցի անուն Տեառն օրհնեալ » : Հերիք չեղաւ վերոգրեալ
համբերութեան հանգէսն՝ մարմինն ալ զանազան վերօք թա-
րախալից հոտեցաւ : բայց առաքինին անոր ալ երկարատու
համբերութեամբ տարաւ առանց տրտնջանաց : Եւ ՚ի վերջոյ
իսկապէս յաղթեց եւ յաղթեց այս ամէն դժուարութեանց :
եւ ստացաւ ապագայի բարին՝ որուն կնպասէր . անցան մա-
ռախրապատ չար օրերն, թագաւորեց անոր ետեւէն առաջի-
նէն եօթնապատիկ աւելի երջանկութիւն խաղաղութեամբ
հանդերձ :

Իոյր կատարելութեամբ լրացոյց Քրիստոս բանն Աստ-
ուած իւր մարմնաւիկ անօրէնութեամբը մարդկային համբե-
րութեանց դերին. որ իբր տկար ոք կը համբերէ՝ նախատանաց՝
ապտակներու եւ խարազանաց, եւ ՚ի վերջոյ չարչարանաց եւ
խաչի . եւ ինչպէս որ ինքն կատարեց՝ նմանապէս ալ կտակ
թողուց իւր հաւատացեցող ասելով՝ « Համբերութեամբ ձե-
րով ստաճիք զոգիս ձեր » :

Ստացան այս համբերութեան անդծելի վահանն նա եւ ա-
ռաքեալք, մարտիրոսք եւ հայրապետք՝ չարչարեցան թէպէտ՝
նախատեցան՝ քարկոծեցան եւ մեռան եւս դարձանելի մահո-

ւմբ, բայց համբերութեան վահանը ոչ երբէք թողուցին ձեռաց :

Ուստիուն հոգւոց մերոց հնդեաասան ամ զարմանալի ձգնութեամբ համբերեց խորվիրսային մէջ, եւ այսպիսեօք բոշոր հայկասեռիցս փրկութեան պատճառ հանդիսացաւ :

Վերջապէս յաղթող է համբերութիւն ամենայն տարժանեւ լի պատահարաց եւ իբր թագուհի ամէն առաքինութեանց վեր բազմած է : Ուրեմն ջանալու է ստանալ համբերութիւնը իբր անգծելի վահան մը, որով միայն կարէ մարդս դիմադրաւ յաղթել շատ դժուարութեանց . եւ իւր կենաց նստն առանց դժոխային ալիկոծութեան ՚ի իսպաղ նաւահանդիսոն հասուցանել :

ԱՐՇԱՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ Աշակերտ

Ժողովուրդայ Չարմարանին

Ե . ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

ՆՈՐ ԲՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ անունով 87 երեսէ բաղկացեալ ազնիւ գրքոյի մը մօտերս ձեռքերնիս հասաւ, որ 1857 ին ՚ի Մօսկուա տպուած է : Ասոր ճարարտահիւս հեղինակն է Համախնցի մեծապատիւ Պետրոս Պէյ Մադաթեանց, Նըշանակիր գործակալ մեծի Տէրութեան Ռուսաց : Այս հոյակապ անձին ինչպէս որ կըլտուի ասկէց ՚ի զատ շատ գրաւոր աշխատութիւններ եւս կան, որոնցմով իւր ցանկալի անունը արդէն անմահացած է : Ձեռքերնիս հասած գրքուկին մանաւանդ հայրենալէպ երգերն շատ ազնիւ եւ եռանդուն եղանակաւ

երգութեամբ լինեին տեսնելով՝ որոշեցինք Արծուոյս միջոցաւ մասն
մասն հաղորդել մեր Արգոյ ընթերցողաց որ Հայկածին երգա-
հանայ քաղցրիկ միմուռններ ծագաց մինչեւ ՚ի ծագս արձա-
դանդ տան իրարու ։

Եւստակիոսութան ձեւն ալ ճիշդ նոյնն թողուցինք ։ որով ա-
ռաւել կըփայլի հայրենանուագ հեղինակին ոգւոյ զարմանալի
աշխուժն ։

ՎԱՍՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ։

Այն աշխարհն պատուական է՝ ուր բուսնում է նուռն ու խաչող
Այն աշխարհն Հայաստան է՝ յորում գոյ բազում խաղ հանող ։

Հայաստանի Աշուղներն հայրենիքն զարդարել են,
Ազգասիրութեան սերմերն պտղատու հողում վարել են,
Տեսել են օգնական չիսյ, իրանք իրանց դադարել են,
Զանազան նեղութեանց միջին ազգի ծէսն կատարել են,
Անձեմարան՝ անլարժապետ՝ առանց սատար եւ առանց միող ։

Երբեմն աննման ջուրն՝ երբեմն առ ու անուրն են գովել,
Երբեմն բերդի ամուրն՝ երբեմն էլ սուրն են գովել,
Երբեմն թշնամեաց հուրն՝ երբեմն ազգի մուրն են գովել,
Երբեմն կեղծիւ համբոյրն՝ երբեմն վատ լուրն են գովել,
Կարճն ասեմ՝ ազգի համար եղել են վարպետ խրատող ։

Խաղաւորաց հետ զովդ արին՝ անբաղդից հետ լաց ու շիւան ։
Խաղաղ վախտն մալ դատեցին, նեղ օրերն ջառմայ տուան ։
Մեղքն իշխանքն գործեցին, նորանց վիզն անկաւ չուան,
Հայաստան քայքայեցաւ՝ ամենայն շահիցն զրկուան,
Ազգի վատ արարմանց մասին նոքա եղեն միշտ ամաչող ։

Հայաստանի նշաններն նրանց խրատն է պահպանել,
Քանզի ուրացող Հայերի սկսել են հողիքն հանել,
Ուրացողքն էլ՝ ուղիղներին փախցրել են եւ սպանել,

Չի գիտեմ այս չար բնութեան սերմն ո՞վ է մեր մէջ ցանկել,
 Որ այս թշուառ գերութիւնից չեմ տեսանում մէկ զերծանող :

Ինչ ազգ որ Աշուղներ չունի, նա իւր սրտումն սէր չունի,
 Ինչ ազգ սրտումն սէր չունի, նա Աստուծոյ պատկեր չունի,
 Ով Աստուծոյ պատկեր չունի, նրան բարի գործեր չունի,
 Ինչ մարդ բարի գործեր չունի, նրան աշխարհին խէյր չունի,
 Նորա կեանքն քամոյ պէս է՝ ինքն չարեաց միաբանող :

Չեմ գիտում թէ մեր խեղճ ազգն մինչ ե՞րբ պիտի այսպէս մնալ
 Եթէ այսպէս շատ մնասցէ, դիփուեք կու լինին բէիղբալ,
 Որն պատուի տէր է լինում, չի ուզում Հային ողջոյն տալ,
 Այս գործերից երեւում է՝ Հայերն չեն յառաջանալ,
 Չու միմեանց հակառակ են, իրար համար չար սերմանող :

Ինչ մարդից որ տեղեկացար՝ թէ նա յատուկ ազգաւ Հայ է,
 Իրան ազգին թշնամի է, այլ ազգին գերի՝ ծառայ է,
 Իմացէք, որ այս խօսքումն սուտ չկայ Աստուած վկայ է,
 Ինչ մարդ իւր ազգին չի սիրեց՝ նա քրիստոնեայ չէ, Յուդայ է,
 Մեղանից բաշխա ո՞վ կուլի իրան խեղճ ազգին կործանող :

Ես ինչ բան է, որ խօսում եմ, փոխանակ դառն արտասուելոյ,
 Էսպէս սգաբեր խօսքերն արժան չէ յայտնի ասուելոյ,
 Ինչ ազգի սէրն պակասեց, նա պատրաստէ վնասելոյ,
 Մէյեադ, միթէ ցանկանում ես այլ ազգերից բամբասուելոյ,
 Քամոյ դէմ բամբակ մի գզիլ, ո՞ւր է ստածդ հասկանող,

ՊԵՏՐՈՍ Տ. ՅՈՎՍԷՓԵԱՆ
 ՄԱԿԱԹԵԱՆՑ ՀԱՄԱԽԵՅԻ
 ՍԵՅԵԱԴ ՄԱԿԱՆՈՒԱՆԵԱԼ :

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ ԳՈՐԾԱԿԱԼԻՔ.

ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ.

ՎԱՆ , Մկրտիչ Տ . Ատոմեան 'ի գրանոցի վասպուրական
Արծուոյն :

ԿԱՐԻՆ , Խաչատուր Խան Տ , 'Երթխեանց եւ միանգամայն
գործակալ Տարօնոյ եւ Ռուսաստանի Հայոց :

ԲԱՂԷՇ , Մ , Ղարիպճան Աղա Մ , Շողիկեանց :

ՏՐԱՊԷՉՈՆ , Աղաճան Աղա Յովհաննիսեան :

ՊՕԼԻՍ , Պ , Յակովբ Աղուանեան վանեցի 'ի Պալթաճի Խան
Զմիւռնիք , Պ , Սարգիս Տէր Մարգարեան վանանդեցոյ :

ԲԵՐԻԱ , Յովհաննէս Աղա Միսաքեան :

ՍԱԼԱՄԱՍՏ , Յակովբ Միրզայեան Մէլք Յակովբեանց . մի-
անգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց :



ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի վան , 'ի Կարին , 'ի Մուշ , 'ի Բաղէշ , 'ի Տրապիզոն 2 ու կէս
Օսմանցիքսան ղուրուշնոց արծաթ Մէճիտիէ :

Ի Պոլս , 'ի Զմիւռնիք , 'ի Բերիա , երեք արծաթ քսան
ղուրուշնոց Մէճիտիէ :

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան , այսինքն 'ի Տփլիս , յԱ-
ղէքսանդրպոլ , 'ի Դաւլթե եւ այլն , չորս արծաթ Մանէթ :

Գին միոյ տետրակի 6 ղուրուշ : Ճանապարհին ծախքը
խմբագիրը պիտի վճարէ :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԵՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՀՏՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱՀԷՆ ՀԱՐՅ

Անյնանուէր Աշտերաք Սրբոյ Թարգմանչայ : . 195

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱՀԷՆ ԱՌԱՔԻՆՆԱՅ

Արարչն Տէկերախաւ Արշալուի Թագաւոր Հայոյ : 214

ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՀԷՆ ԱՀԻԱՐՀԱՅ

Սէն Կաթ Դափրաճախերաք : 211

ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՅ

Հափերո-Լի-ն : 217

ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՅ

Պերոյ Պէյ Մադալիտայ

“ Բնար Հայաստանի ” : 221